

ԱՎԱՐՏԱՃԱՌԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ՀՈԳԵՎՈՐ ՃԵՄԱՐԱՆՈՒՄ

Մարտի 13—14 օրերին, առավոտյան ժամը 11-ին, հոգևոր ճեմարանի հանդիսությունների դահլիճում տեղի ունեցավ հոգևոր ճեմարանի ութ շրջանավարտների ավարտաճառերի բանավոր պաշտպանությունը:

Հանդիսություններին ներկա էին Մայր Աթոռի միաբանությունը, հոգևոր ճեմարանի դասախոսական կազմը, ուսանողությունը և հրավիրյալ հյուրեր:

Հանդիսություններն սկսվեցին մարտի 13-ին, հինգշաբթի օրը, ժամը 11-ին, հոգևոր ճեմարանի տեսուչ Տ. Եղնիկ քհն. Պետրոսյանի բացման խոսքով:

Այնուհետև շրջանավարտների առաջին խմբի ավարտաճառերի պաշտպանության քննիչ հանձնաժողովի անդամները (հոգևոր ճեմարանի Հայ Եկեղեցու պատմության դասախոս Տ. Եղիշե ավագ քհն. Սարգսյան, ճեմարանի վաստակավոր դասախոս Պարգև Շահբազյան և բանասիրական գիտությունների թեկնածու Երվանդ Մելքոնյան) ներկայացրեցին հանձնաժողովի եզրակացությունները շրջանավարտ սարկավագների գրավոր աշխատանքների վերաբերյալ:

Ապա իրենց ավարտաճառերի բանավոր պաշտպանությամբ հանդես եկան.

1.—Սամվել սրկ. Դանիելյան.

Նրա աշխատանքի թեման էր՝ «Կիրակոս Երզնկացու «Թուղթ առ Կարնեցիս» գործը:

Աշխատանքը բաղկացած էր 100 մեքենագիր էջից և ընդգրկում էր՝

ա) Կիրակոս Երզնկացու կյանքը և գործը.

բ) Կիրակոս Երզնկացու «Թուղթ առ Կարնեցիս» (Բնագիր, Տարընթերցումներ, Սուրբգրական վկայակոչումներ): Քննական բնագիրը պատրաստված էր 10 ձեռագիրների համեմատության հիման վրա:

Ներկայացված աշխատությունը գնահատվեց «քաջալավ»:

2.—Սարգիս սրկ. Գուտուլյան.

Նրա աշխատանքի թեման էր՝ «Հայոց պատարագի ավանդական մեղեդիները»: Աշխատանքը բաղկացած էր 100 մեքենագիր էջից և ուներ հետևյալ բովանդակությունը.

ա) Ներածություն.

բ) Պատմական տեղեկություններ հայոց պատարագի ավանդական մեղեդիների մասին.

գ) Գևորգ Դ-ի ջանքերով և հմուտ ձայնագրագետ Թաշջյանի կողմից Վաղարշապատում ձայնագրված և 1874—1878 թթ. հրապարակված Հայոց ավանդական պատարագի Ս. Էջմիածնում պահպանված տարբերակների մասին.

դ) Հայոց ավանդական պատարագի ձայնագրյալ մեղեդիները Իբրև հիմք Եկմալյանի, Կոմիտասի, Չիլինկիրյանի և այլոց բազմաձայն պատարագների:

Պաշտպանությունը գնահատվեց «լավ»:

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ԵՎ ՀՈԳԵՎՈՐ ՃԵՄԱՐԱՆԻ ՏԵՍՉԱԿԱՆ ԿԱԶՄԸ ՆՈՐՈԳ ՎԿԱՅՎԱԾ ՍԱՆԵՐԻ ՀԵՏ

3.—**Հայկ սրկ. Չուլչյան.**

Նրա աշխատանքի թեման էր՝ «Ղուկաս Խարբերդացու թարգմանչական գործունեությունը (աղբյուրագիտական հարցեր և մատենագիտություն)»:

Աշխատությունը բաղկացած էր 57 մեքենագիր էջից և ուներ հետևյալ բովանդակությունը.

ա) Ներածություն.

բ) Ղուկաս Խարբերդացու կյանքն ու թարգմանչական գործունեությունը.

գ) Նրա կատարած թարգմանությունների մատենագիտություն:

Պաշտպանությունը գնահատվեց «բավարար»:

4.—**Մարգար սրկ. Տերտերյան.**

Նրա աշխատանքի թեման էր՝ «Ծռապատիկի առաջացման պատճառները և նրա արձագանքները հայ մատենագրության մեջ»:

Աշխատությունը բաղկացած էր 40 մեքենագիր էջից և ուներ հետևյալ բովանդակությունը:

ա) Հարցի պատմություն.

բ) Ծռածատիկը և նրա առաջացման պատճառները.

գ) Հայ մատենագիրները ծռապատիկի մասին:

Պաշտպանությունը գնահատվեց «բավարար»:

Մարտի 14-ին, ուրբաթ օրը, քննիչ հանձնաժողովը, որի կազմի մեջ էին հոգևոր ճեմարանի փոխտեսուչ Տ. Հայկազուն վրդ. Նաջարյանը, բանասիրական գիտությունների թեկնածու Արտաշես Մաթևոսյանը, ճեմարանի հոգեբանության և փիլիսոփայության դասախոս, գիտությունների թեկնածու Երվանդ Գրիգորյանը, ներկայացրին շրջանավարտների երկրորդ խմբի գրավոր աշխատանքների եզրակացությունները:

Ավարտաճառերի բանավոր պաշտպանությամբ հանդես եկան.

1.—**Սամվել սրկ. Կճոյան.**

Նրա աշխատանքի թեման էր՝ «Հովհաննես Դամասկացին և նրա «Բանք ընդդիմադրականք ի քակտումն հերձուածոց Յակոբիկ Ասորոց» գործը»:

Աշխատանքը բաղկացած էր 93 մեքենագիր էջից և ուներ հետևյալ բովանդակությունը.

ա) Ներածություն.

բ) Հովհաննես Դամասկացու կյանքը.

գ) Հովհաննես Դամասկացու գրական ժառանգությունը.

դ) «Բանք ընդդիմադրականքի» գրության ժամանակը, հայերեն թարգմանությունը, աստվածաբանական նշանակությունը.

ե) Ձեռագրերի տեսություն (Բնագիր):

Պաշտպանությունը գնահատվեց «գերազանց»:

2.—**Ռոբերտ սրկ. Ադամյան.**

Նրա աշխատանքի թեման էր՝ «Սարգիս Շնորհալու հորդորակները»:

Աշխատությունը բաղկացած էր 68 մեքենագիր էջից և ուներ հետևյալ բովանդակությունը.

ա) Կենսագրական գծեր.

բ) Սարգիս Շնորհալու «Մեկնութիւն եօթեանց թղթոց» գործը.

գ) Հորդորակների վերլուծությունը.

դ) Հավելված և մատենագիտություն:

Պաշտպանությունը գնահատվեց «լավ»:

3.—**Տ. Մխիթար քհն. Սարիբեկյան.**

Նրա աշխատանքի թեման էր՝ «Համամ Արևելցու Առակաց մեկնությունը»:

Աշխատությունը բաղկացած էր 92 մեքենագիր էջից և ուներ հետևյալ բովանդակությունը.

ա) Համամ Արևելցու կյանքն ու մատենագրական վաստակը.

բ) «Մեկնութիւն Առակաց Սողոմոնի» գործը.

գ) Բնագիր:

Պաշտպանությունը գնահատվեց «բավարար»:

4.—**Սարգիս սրկ. Մելքոնյան.**

Նրա աշխատանքի թեման էր՝ «Բնագրային ճշգրտումներ Հայաստանյայց Եկեղեցու հին և նոր տպագիր պատարագամատույցների կամ խորհրդատետրերի»:

Աշխատությունը բաղկացած էր 78 մեքենագիր էջից և ուներ հետևյալ բովանդակությունը.

ա) Ներածություն.

բ) Հայաստանյայց Եկեղեցու տպագիր խորհրդատետրերը ԺԶ—Ի դդ. և նրանց նկարագրությունները.

գ) Հայ կաթուղիկե խորհրդատետրերի քննությունը և հիմնական տարբերությունները.

դ) Վերջաբան:

Պաշտպանությունը գնահատվեց «բավարար»:

Հավարտ դիպլոմային աշխատանքների բանավոր պաշտպանության, հոգևոր ճեմարանի տեսուչ Տ. Եղնիկ քհն. Պետրոսյանը և փոխտեսուչ Տ. Հայկազուն վրդ. Նաջարյանը ութ շրջանավարտներին առաջնորդեցին Վեհարան, որտեղ Նորին Սրբությունը իր հայրական օրհնությունը բաշխելով վկայականների արժանացած շրջանավարտներին՝ մաղթեց, որ հետագայում չբավարարվեն ձեռք բերած գիտելիքներով և ձգտեն միշտ կարգացնել իրենց մտավոր և հոգեկան կարողությունները:

* * *

1985 թ. դեկտեմբեր ամսին, արտասահման ծառայության գործուղվելու կապակցությամբ, ժամանակից շուտ ավարտաճառ ներկայացրեց Հակոբ սրկ. Գալթագճյանը: Նրա ավարտաճառի թեման էր՝ «Հայ հին մատենագրության տպագրված տեքստերի մատենագիտություն» (**«Արարատ»**, **«Բազմավէպ»**, **«Էջմիածին»**, **«Հանդէս ամսօրեայ»**, **«Հասկ»**, **«Սիոն»** ամսագրերում):

Աշխատությունը գնահատվեց «բավարար»: